Հավելված N 6
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2023 թվականի մարտի 22-ի N [illegible]-Լ որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի (այսուհետ՝ մարզպետի աշխատակազմ) գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հանդիսանում է հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքով, «Հանրային ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Տեղեկատվության ազատության մասին», «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին», «Բնապահպանական վերահսկողության մասին», «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին», «Բուսական աշխարհի մասին», «Կենդանական աշխարհի մասին», «Անասնաբուժության մասին», «Տոհմային անասնաբուծության մասին», «Բուսասանիտարիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության, վարչապետի և քաղաքացիական ծառայությունը համակարգող փոխվարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի (այսուհետ՝ Մարզպետ) որոշումներով, Գլխավոր քարտուղարի հրամաններով, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Վարչության լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերով:

3. Վարչությունը կազմավորում, վերակազմակերպում և նրա գործունեությունը դադարեցնում է ՀՀ վարչապետը:

4. Վարչության կանոնադրությունը հաստատում (փոփոխում է) Մարզպետը:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Վարչությունն իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) համակարգում և վերահսկում է ՀՀ Վայոց ձորի մարզում /այսուհետ՝ Մարզ/ գյուղատնտեսության զարգացմանն ուղղված պետական օժանդակության ծրագրերի իրականացումը և ապահովում դրանց իրագործումը.

2) համագործակցում է միջազգային կազմակերպությունների հետ և վերահսկում

3) ապահովում է մարզային նշանակության ոռոգման ցանցերի կառուցման, պահպանման և շահագործման աշխատանքները, ջրատնտեսական և ոռոգման կազմակերպությունների գործունեությունը, միջոցներ է ձեռնարկում հանրապետական նշանակության ոռոգման համակարգերի նպատակային շահագործման ուղղությամբ.

4) ապահովում և վերահսկում է գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններին ագրարային ոլորտի տնտեսվարող այլ սուբյեկտներին արտադրության կազմակերպման և զարգացման գործում, ներկայացնում է պարարտանյութերի, վառելանյութի, սերմերի, տնկանյութերի, թունաքիմիկատների, անասնագլխաքանակի վերաբերյալ պահանջարկը պետական համակարգի լիազոր մարմին, համակարգում և վերահսկում է գյուղատնտեսական արտադրանքի մթերումն ու իրացումը.

5) վերահսկում է գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների և վնասատուների, մոլախոտերի դեմ պայքարի, կարանտինային պահանջների կատարման և ագրոկանոնների պահպանմանն ուղղված աշխատանքները, համագործակցում է բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի բնագավառում պետական լիազորված մարմնի և տեղական ինքնակառավարման մարմինների հետ.

6) վերահսկում է Մարզի տարածքում բնապահպանական օրենսդրության կատարումը.

7) համագործակցում է բնապահպանական խնդիրներ և բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանություն իրականացնող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիների հետ.

8) վերահսկում է Մարզում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության իրականացման աշխատանքները և համագործակցում համապատասխան կազմակերպությունների հետ.

9) օժանդակում է Մարզի տարածքում բնական պաշարներ օգտագործող օբյեկտների և սուբյեկտների գործունեությանը և պարբերաբար Մարզպետին ներկայացնում տեղեկատվություն վերջիններիս վերաբերյալ.

10) իրականացնում է Մարզում պետական ծրագրեր՝ անտառների և անտառային հողերի պահպանության և օգտագործման նպատակով.

11) անհրաժեշտության դեպքում ներգրավում է Մարզի վարչական տարածքներում անտառային հրդեհների մարման աշխատանքների մասնագիտացված ծառայություններին, անտառօգտագործողներին և բնակչությանը.

12) իրականացնում է Մարզի տարածքում բնական աղետների, մարդ-վայրի բնություն կոնֆլիկտի հետևանքների ուսումնասիրության աշխատանքները, գնահատում է աղետների և վայրի կենդանիների կողմից պատճառված վնասների չափերը, համայնքներից հավաքագրում արտակարգ իրավիճակների հետևանքով իրավաբանական և ֆիզիկական անձանց հասցված վնասները գնահատող համայնքային հանձնաժողովների արձանագրությունները և արդյունքները ներկայացնում վնասները գնահատող մարզային հանձնաժողովին.

13) ապահովում է Մարզի համայնքների համայնքային սեփականություն հանդիսացող հողերի բերրիության, հողի օգտակար հատկությունների պահպանման, բարելավման և արդյունավետ օգտագործման գործընթացի կազմակերպումը.

14) ապահովում և վերահսկում է Մարզում գյուղատնտեսական կենդանիների հաշվառման, Մարզի տարածքի սերմնաբուծական կազմակերպությունների տոհմաբուծարանների և արհեստական սերմնավորման կայանների գործունեության աշխատանքները.

15) կազմակերպում և վերահսկում է Մարզում հակաանասնահամաճարակային

զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների, թունավորումների կանխարգելման ու վերացման ուղղությամբ աշխատանքները, կարանտինային հիվանդության բռնկման դեպքում վարչատարածքային անասնաբուժական ծառայության մարմինների ներկայացմամբ սահմանված կարգով, համապատասխան տարածքում՝ Մարզում, համայնքում սահմանում և չեղյալ է հայտարարում կարանտինը.

16) իրականացնում է մշտադիտարկում բնագավառում տիրող իրավիճակի վերաբերյալ.

17) Վարչությանը վերապահված լիազորությունների շրջանակներում կազմակերպում և համակարգում է Մարզի տարածքում մարզային համապատասխան ծրագրերով նախատեսված արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման, տարերային և տեխնոլոգիական աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ աշխատանքները.

18) իրականացնում է Մարզի քաղաքացիական պաշտպանության բնագավառում Վարչությանը վերապահված գործառույթներ.

19) իրավական և մասնագիտական հսկողության շրջանակում իրականացնում է հսկողություն Մարզի տեղական ինքնակառավարման մարմիններում, օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան առաջարկություններ և անհրաժեշտ տեղեկատվություն է ներկայացնում Մարզպետին.

20) իրականացնում է քաղաքացիների ընդունելություն: Անհրաժեշտության դեպքում տալիս է մեթոդական պարզաբանումներ, տրամադրում է խորհրդատվական օգնություն: Ուսումնասիրում է քաղաքացիների դիմումները, բողոքները և առաջարկությունները, ձեռնարկում է համապատասխան միջոցներ և առաջարկություններ ներկայացնում Մարզպետին.

21) նախապատրաստում է Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, եզրակացություններ:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

6. Վարչության գործունեությունը համակարգում և վերահսկում է Մարզպետը: Գլխավոր քարտուղարը պատասխանատու է Վարչության գործունեության կազմակերպման համար:

7. Վարչությունը պետը անմիջական հաշվետու է Մարզպետին: Մարզպետը վարչության պետի անմիջական ղեկավարն է:

8. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Վարչության պետը:

9. Վարչության պետը պատասխանատու է Վարչության առջև դրված խնդիրների և Վարչությանը վերապահված գործառույթների իրականացման համար:

10. Վարչության պետը և աշխատողները համարվում են քաղաքացիական ծառայողներ:

11. Վարչության պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հետ կապված դրույթներն սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: